Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 18-ի N 269 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՈՐԴԵԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում որդեգրման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառման, նրանց մասին տեղեկությունների տրամադրման, որդեգրման կարգի, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել (դստերագրել) (այսուհետ՝ որդեգրել) ցանկացող՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի), ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացի), Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառման հետ կապված հարաբերությունները։

II. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

2. Որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքեր։

3. Որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի մարզպետարանների (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապե-

տարանի) աշխատակազմերը (այսուհետ՝ աշխատակազմ)՝ իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով։

4. Հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի (N 1 ձև) հիման վրա, որը ներառում է երեխայի կենսագրական տվյալների, էթնիկական ծագման, սոցիալական շրջապատի, ընտանիքի պատմության, առողջության, նաև երեխայի հիվանդությունների, բժշկական հետազոտությունների, զննումների, հիվանդությունների, դրանց բուժումների և ընթացիկ առողջական վիճակի ու երեխայի հատուկ պահանջների մասին տեղեկություններ, կազմում է երեխայի համար անձնական գործ, որի պատճենահանված օրինակն ուղարկում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով։

5. Նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը և տեղեկացնում (N 2 ձև) աշխատակազմին։

6. Կենտրոնացված հաշվառման վերցնելուց 3 ամիս հետո նախարարությունը երեխայի անձնական գործի պատճենահանված մեկ օրինակը հաշվառման մասին տեղեկությունների հետ միասին ուղարկում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված կենտրոնական մարմին (այսուհետ՝ կենտրոնական մարմին)։

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱ ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7. Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով անձամբ կամ լիազորված անձի միջոցով դիմում են (N 3 ձև) իրենց բնակության վայրի աշխատակազմ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը և դրանց պատճենները՝

1) անձը հաստատող փաստաթուղթ.

2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից.

3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից.

4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի և այլ եկամուտների մասին տեղեկանք.

5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից.

6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որևէ մեկով.

7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է).

8) երեխայի՝ ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, և մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է.

9) տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին։

8. Աշխատակազմը սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կատարում է անձի կենսապայմանների ուսումնասիրություն, կազմում համապատասխան ակտ և տալիս որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն։

9. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական և անթերի լինելու, որդեգրումն արգելող՝ օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքերում, ինչպես նաև անձի կենսապայմանների ուսումնասիրության ակտի հիման վրա աշխատակազմը տալիս է դրական եզրակացություն, որն ուժի մեջ է այն տալու օրվանից 12 ամիս։ Դիմումատուն դրական եզրակացության հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառվում է որպես որդեգրել ցանկացող անձ։

10. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական չլինելու, դրանցում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում աշխատակազմը դիմողին գրավոր առաջարկում է 30-օրյա ժամկետում ներկայացնել պահանջվող տեղեկությունները կամ ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները։

11. Աշխատակազմը երեխայի որդեգրման հնարավորության մասին բացասական եզրակացություն (որն ուժի մեջ է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում) տալիս է՝

1) երեխա որդեգրել ցանկացող անձի կողմից սույն կարգի 10-րդ կետով սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերում առկա թերությունները չվերացնելու դեպքում.

2) որդեգրել ցանկացող անձին բացասաբար բնութագրող հատկանիշների մասին ստացված տեղեկությունների հիման վրա.

3) անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտի հիման վրա.

4) երեխա որդեգրել ցանկացող անձի դիմումը հիմնավորված չլինելու դեպքում.

5) որդեգրումն արգելող՝ օրենքով նախատեսված դեպքերում։

12. Աշխատակազմը բացասական եզրակացության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին։

13. Աշխատակազմը հաշվառման վերցված որդեգրել ցանկացող անձի համար լրացնում է անձնական քարտ (N 4 ձև)՝ 2 օրինակից, և իր կողմից տրված դրական եզրա-

կացության, որդեգրել ցանկացող անձի անձնական քարտի, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի, անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտի հիման վրա որդեգրել ցանկացող անձի համար կազմում է անձնական գործ։

14. Անձնական գործերի համարակալումն սկսվում է 1-ին համարից և հաջորդաբար շարունակվում տարվա ընթացքում։

15. Որդեգրել ցանկացող անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը, անձնական գործի համարը) գրանցվում են հաշվառման մատյանում կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով։

16. Աշխատակազմը որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահան-ված օրինակը հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է նախարարություն՝ կենտրոնացված հաշվառում իրականացնելու նպատակով։

17. Նախարարությունն աշխատակազմից ստացված անձնական գործի հիման վրա որդեգրել ցանկացող անձին վերցնում է կենտրոնացված հաշվառման և 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում (N 5 ձև) աշխատակազմին և որդեգրել ցանկացող անձին։

18. Որդեգրել ցանկացող անձը հաշվառումից հանվում է՝

1) իր դիմումի համաձայն.

2) դրական եզրակացության 12 ամիսը լրանալու դեպքում.

3) երեխայի որդեգրման դեպքում (եթե որդեգրել է իր դիմումում նշված թվով երեխա).

4) Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակություն հաստատելու դեպքում.

5) Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առաջացման դեպքում։

IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱ ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-

ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

19. «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) անդամ երկրներում բնակվող՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով դիմում են համապատասխան երկրի կենտրոնական մարմին՝ ներկայացնելով սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որդեգրել ցանկացող անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտը, ինչպես նաև տվյալ երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանի Հանրապետությունում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ։

20. Կոնվենցիային չանդամակցող երկրներում բնակվող՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով, անձամբ կամ լիազորված անձի, կամ տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով դիմում են կենտրոնական մարմին՝ ներկայացնելով սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև իրենց մշտական բնակության երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանի Հանրապետությունում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ, որդեգրել ցանկացող անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտը և հետագայում որդեգրված երեխայի կյանքի պայմանների նկատմամբ վերահսկողության պարտավորության մասին տեղեկանքը՝ տրված իրենց երկրի իրավասու մարմնի կողմից։

21. Որդեգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնագրով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված՝ հայերեն թարգմանությամբ։

22. Սույն կարգի 19-րդ հոդվածով նախատեսված դեպքերում երեխա ընդունող պետության կենտրոնական մարմնից ստացված՝ որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու փաստաթղթերը և կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված զեկույցը, իսկ սույն կարգի 20-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ որդեգրել ցանկացող անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կենտրոնական մարմնի կողմից 7 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվում են՝ անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ամբողջականությունն ստուգելու նպատակով։

23. Կենտրոնական մարմինը սույն կարգի 7-րդ, 19-րդ և 20-րդ կետերով նախատեսված՝ որդեգրմանը վերաբերող փաստաթղթերն ամբողջական չլինելու կամ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ ընդունող պետության կենտրոնական մարմնին կամ օտարերկրացուն կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն առաջարկում է 60-օրյա ժամկետում վերացնել թերությունները և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը։

24. Կենտրոնական մարմինը որդեգրմանը վերաբերող փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)։

25. Հանձնաժողովը, ուսումնասիրելով կենտրոնական մարմնից ստացված՝ որդեգրմանը վերաբերող փաստաթղթերը, մեկամսյա ժամկետում տալիս է որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն և 3 աշխատանքային օրվա

ընթացքում գրավոր տեղեկացնում կենտրոնական մարմնին՝ դիմողին կամ ընդունող պետության կենտրոնական մարմնին տեղեկացնելու համար։

26. Երեխայի որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացություն տալու դեպքում, որն ուժի մեջ է տալու օրվանից 12 ամիս, հանձնաժողովը որդեգրել ցանկացող անձի վերաբերյալ փաստաթղթերը և դրական եզրակացության մեկ օրինակը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է նախարարություն՝ կենտրոնացված հաշվառում իրականացնելու նպատակով։

27. Հանձնաժողովը երեխայի որդեգրման մասին բացասական եզրակացություն (որն ուժի մեջ է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում) տալիս է՝

1) ընդունող պետության կենտրոնական մարմնի կամ որդեգրել ցանկացող օտարերկրացու, կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից սույն կարգի 23-րդ կետով սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերի ամբողջականությունը չապահովելու և թերությունները չվերացնելու դեպքում.

2) որդեգրել ցանկացող անձին բացասաբար բնութագրող հատկանիշների մասին ստացված տեղեկությունների հիման վրա.

3) որդեգրման մասին խնդրանքը հիմնավորված չլինելու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում։

28. Նախարարությունը հանձնաժողովից ստացված փաստաթղթերի հիման վրա իրականացնում է կենտրոնացված հաշվառում և որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու վերաբերյալ լրացնում է անձնական քարտ (N 4 ձև)՝ 2 օրինակից։

29. Դրական եզրակացության, որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության

քաղաքացու անձնական քարտի, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա նախարարությունը կազմում է անձնական գործ։

30. Անձնական գործերի համարակալումն սկսվում է 1-ին համարից և հաջորդաբար շարունակվում տարվա ընթացքում։

31. Անձնական գործում առկա տեղեկությունները (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը, անձնական գործի համարը) գրանցվում են հաշվառման մատյանում կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով։

32. Նախարարությունը հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման մասին տեղեկացնում է (N 6 ձև) հանձնաժողովին և կենտրոնական մարմնին։

33. Նախարարությունը սույն կարգի 32-րդ կետով նախատեսված տեղեկանքի հետ միասին կենտրոնական մարմին է ուղարկում նաև հաշվառված՝ որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնական գործը։

34. Որդեգրել ցանկացող անձը հաշվառումից հանվում է սույն կարգի 18-րդ կետով (բացառությամբ 18-րդ կետի 4-րդ ենթակետի) նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր մշտական բնակության երկիրը փոխելու դեպքում։

V. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և օտարերկրացիները՝ կենտրոնական մարմին։

36. Հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին և օտարերկրացին կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործերին՝ նախընտրելի չափանիշներով երեխա ընտրելու համար։

37. Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրել ցանկացող անձը հաշվառումից չի հանվում։

38. Նախարարությունը որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկությունները գրավոր հարցումների հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հանձնաժողովին և այլ իրավասու մարմինների՝ նրանց գրավոր հարցումների հիման վրա։

39. Այն դեպքերում, երբ երեխային որդեգրելու ցանկություն է հայտնել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ, երբ երեխայի ծնողների և որդեգրել ցանկացող անձի (անձանց) միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն, կենտրոնական մարմինն առանց ժամկետի սահմանափակման կարող է հարցմամբ պահանջել և ստանալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը։ Այդ դեպքերում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում։ Որդեգրել ցանկացող անձի կողմից տվյալ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում երեխան հանվում է հաշվառումից։

40. Հաշվառված՝ որդեգրել ցանկացող անձանց կողմից որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում սույն կարգի III գլխում նախատեսված դեպքերում աշխատակազմը, իսկ սույն կարգի IV գլխում նախատեսված դեպքերում՝ կենտրոնական մարմինը նախարարությանը գրավոր տեղեկացնում է դրա մասին և, եթե այլ որդեգրել ցանկացող անձ ընտրված երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել, ապա կազմակերպում է որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի հանդիպումը։

41. Սույն կարգի 40-րդ կետով նախատեսված տեղեկատվությունն ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում նախարարությունը կասեցնում է որդեգրման ենթակա երեխայի տվյալների տրամադրումը։

42. Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, ապա երեխայի հետ նրանցից առաջինի հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց դիմումները տալու հերթականության։ Որդեգրել ցանկացող մյուս անձի հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե առաջինը 15 օրվա ընթացքում ցանկություն չի հայտնել տվյալ երեխային որդեգրելու մասին։

43. Եթե հաշվառված՝ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին կամ օտարերկրացին որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկությամբ դիմել են նույն ժամանակահատվածում (դիմելու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում), ապա երեխայի հետ հանդիպման առաջնահերթությունը տրվում է որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն։

44. Որդեգրել ցանկացող օտարերկրացու և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին երեխայի հետ հանդիպումից հետո 15 օրվա ընթացքում որդեգրելու ցանկություն չի հայտնել։

VI. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

45. Որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում դիմում է իր բնակության վայրի աշխատակազմ, որը

որդեգրման ենթակա երեխայի վերաբերյալ հարցումը (ծանուցումը) (N 7 ձև) 2 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է նախարարություն։

46. Նախարարությունը համապատասխան ուսումնասիրություն (որդեգրման մասին այլ դիմումների առկայություն և այլն) կատարելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմին տեղեկացնում է որդեգրման հնարավորության մասին, իսկ դրական պատասխան հայտնելու դեպքում՝ մեկ օրվա ընթացքում նաև կասեցնում է որդեգրման ենթակա երեխայի տվյալների տրամադրումը որդեգրել ցանկացող այլ անձանց կամ մարմինների։

VII. ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՐԴԵԳՐՈՒՄՆ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

47. Որդեգրել ցանկացող օտարերկրացին կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին որդեգրման ենթակա երեխա ընտրելու դեպքում դիմում է կենտրոնական մարմին, որը 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է նախարարությանը։

48. Նախարարությունը համապատասխան ուսումնասիրություն (որդեգրման մասին այլ դիմումների առկայություն և այլն) կատարելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնական մարմնին գրավոր տեղեկացնում է որդեգրման հնարավորության մասին և, անհրաժեշտության դեպքում, նաև ուղարկում որդեգրման ենթակա երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը։

49. Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել մեկից ավելի օտարերկրացի կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա նրանց հանդիպումը երեխայի հետ կազմակերպվում է սույն կարգի 42-րդ կետով նախատեսված հերթականությամբ։

50. Կենտրոնական մարմինը որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու և որդեգրման ենթակա երեխայի անձնական գործերն ու նախարարության տեղեկանքը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ։

51. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը 3 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերի պատճեններն ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (այսուհետ՝ ոստիկանություն), որը համապատասխան ուսումնասիրության արդյունքների մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին։

52. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ որդեգրման թույլտվություն (նախնական համաձայնություն) տալու կամ այն մերժելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է կենտրոնական մարմնին՝ վերադարձնելով նաև ստացված փաստաթղթերը։

53. Որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա որդեգրման մասին ակտը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելուց հետո օտարերկրացին կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին կոնվենցիայի 23-րդ հոդվածով սահմանված վկայականն ստանալու նպատակով դիմումի հետ միասին կենտրոնական մարմին է ներկայացնում՝

1) որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը (պատճենը).

2) երեխայի ծննդյան և որդեգրման վկայականները (պատճենները).

3) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները։

54. Կենտրոնական մարմինը դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է միջպետական որդեգրումը հավաստող վկայական (N 8 ձև)։

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. Սույն կարգով նախատեսված բոլոր դիմումները տրվում են գրավոր։

56. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրացիների և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված երեխայի որդեգրումը գրանցելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի, որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները, որդեգրման մասին ակտի գրանցման պատճենն ուղարկում է նախարարություն։

57. Երեխայի որդեգրումից հետո կամ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության ժամկետը լրանալուց հետո անձնական գործերը պահվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

58. Որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության ժամկետը լրանալուց հետո որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու պահանջով կարող են վերադարձվել նրա անձնագրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների հայերեն թարգմանված օրինակները և դիմելու պահին վավերական այլ փաստաթղթերի բնօրինակները՝ գործում պահելով դրանց պատճենները։

59. Սույն կարգի 3-րդ գլխում նախատեսված դեպքերում աշխատակազմը, իսկ սույն կարգի 4-րդ գլխում նախատեսված դեպքերում հանձնաժողովի քարտուղարությունը

որդեգրել ցանկացող անձի դիմումի հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է որդեգրման մասին եզրակացության մեկ օրինակը։

60. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրացին որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով դիմում է կենտրոնական մարմին՝ ներկայացնելով սույն կարգի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տվյալ երկրի (որի քաղաքացին է անձը) իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանի Հանրապետությունում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ։

61. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրացին սույն կարգի 7-րդ կետի 2-6-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններից։

62. Սույն կարգի 6-րդ գլխում նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ սույն կարգի 7-րդ գլխում նախատեսված դեպքերում օտարերկրացիները կամ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրացիները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան երեխայի որդեգրումը հաստատելու նպատակով դիմում են երեխայի բնակության վայրի (գտնվելու վայրի) ընդհանուր իրավասության դատարան։

63. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կոնվենցիայի անդամ օտարերկրյա պետություններից երեխա որդեգրելու համար որպես որդեգրել ցանկացող անձ՝ սույն կարգին համապատասխան հաշվառվելուց հետո դիմում են կենտրոնական մարմին։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ն Ք Ա Ր Տ

ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԵԽԱՅԻ

Լուսանկար

_____ _____ _____ թ.

_____

(բաժնի անվանումը)

Տեղեկություններ երեխայի մասին_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

Սեռը _____, ծննդյան ժամանակը _____ _____ _____ թ.

Ազգությունը _____

Երբ և որ խնամքի ու պաշտպանության հաստատություն է ընդունվել երեխան _____

_____

(նշել մարմնի անվանումը և ընդունման ժամանակը)

Սոցիալական վիճակը՝ ծնողազուրկ է, մնացել է առանց ծնողական խնամքի, ընկեցիկ է (ընդգծել)

Ծննդյան վայրը _____

_____

Ծննդյան վկայական _____

(սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

_____

Երեխայի հատուկ նշանները _____

(հասակը, քաշը, աչքերի գույնը, մազերի գույնը,

_____

այլ առանձնահատուկ հատկանիշներ)

_____

Բնութագրիչ առանձնահատկությունները _____

(շփվող, ինքնամփոփ և այլն)

_____

Բնակության (գտնվելու) վայրը _____

_____

Բժշկական եզրակացություն առողջական վիճակի մասին _____

_____

_____

Տեղեկություններ ծնողների մասին՝ լրացնելու պահի դրությամբ.

Մայրը _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան ժամանակը _____ _____ _____ թ., ազգությունը _____

Բնակության վայրը _____

Սոցիալական տեղեկանք _____
(աշխատանքի վայրը,

_____
առողջական վիճակը. նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է)

Հայրը _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան ժամանակը _____ _____ _____ թ., ազգությունը _____

Բնակության վայրը _____

Սոցիալական տեղեկանք _____
(աշխատանքի վայրը,

_____
առողջական վիճակը. նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է)

Եղբայրներ, քույրեր, այլ ազգականներ _____
(անունները, հայրանունները, ազգանունները,

_____
բնակության վայրը)

_____

Որդեգրման հանձնելու իրավական հիմքերը _____
(ծնողի (ծնողների) մահվան վկայականը (վկայականները),

_____
ակտ երեխայի ընկեցիկ լինելու մասին, ծնողներին ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի

_____
վճիռը, որդեգրելու համար գրավոր համաձայնությունը և այլն)

_____

Լրացուցիչ տեղեկություններ _____

_____

_____

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՍԻՆ

Տրվում է այն մասին, որ ՀՀ _____ մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի _____
(բաժնի անվանումը)

_____ կողմից

____ _____ _____ թ. N _____ անձնական քարտում որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառված _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____, ծնված՝ _____ _____ _____ թ-ին,

_____,
(ծննդավայրը)

գտնվում է _____,
(բնակության, գտնվելու վայրը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում _____ _____ _____ թ-ին վերցված է կենտրոնացված հաշվառման:

Կենտրոնացված հաշվառման համարը՝ _____

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

10_0269

Ձև N 3

_____
(նշել այն մարմնի անվանումը

_____
ում ներկայացվում է դիմումը)

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ -ից

բնակվող _____

_____

Անձը հաստատող փաստաթուղթ _____
(անվանումը,

_____
սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

_____

Դ Ի Մ ՈՒ Մ

Ես՝ _____,
(անունը, հայրանունը, ազգանունը)

Սեռը _____, ծննդյան ժամանակը _____ _____ _____ թ.

Քաղաքացիությունը _____

Ազգությունը _____

Ծննդյան վայրը _____

Դավանանքը _____

Բնակության վայրը _____

_____

Աշխատանքի վայրը (պաշտոնը) _____

_____

Ընտանեկան դրությունը _____
(ամուսնացած, ամուրի և այլն)

Առողջական վիճակը _____
(նորմալ, քրոնիկ հիվանդ, հաշմանդամ և այլն)

Ցանկանում եմ որդեգրել _____
(ցանկալի երեխայի սեռը, տարիքը, թիվը, արտաքինը և այլ

_____
առանձնահատուկ հատկանիշներ)

_____

Իմ մասին հայտնում եմ լրացուցիչ տեղեկություններ _____

_____

_____

Ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

_____ _____

_____ _____

_____ _____

_____ _____

_____ _____

_____ _____

_____ _____

_____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Ձև N 4

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՐՏ N _____

_____ _____ _____ թ.

_____
(բաժնի անվանումը)

Տվյալներ անձի մասին (լրացնելու պահի դրությամբ) _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

Սեռը _____, ծննդյան ժամանակը _____ _____ _____ թ.

Քաղաքացիությունը _____

Ազգությունը _____

Ծննդյան վայրը _____

_____

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(անվանումը, սերիան, համարը, երբ և ում կողմից է տրված)

_____

Բնակության վայրը _____

_____

Աշխատանքի վայրը (պաշտոնը) _____

_____

Ընտանեկան դրությունը _____
(ամուսնացած է, ամուրի է և այլն)

Առողջական վիճակը _____
(նորմալ է, քրոնիկ հիվանդ է, հաշմանդամ է և այլն)

Ցանկալի երեխայի մասին տվյալներ _____
(սեռը, տարիքը, թիվը, արտաքինը և այլ

_____
առանձնահատուկ հատկանիշներ)

Լրացուցիչ տեղեկություններ _____

_____

_____

_____

(անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

Ձև N 5

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Տրվում է այն մասին, որ ՀՀ _____ մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի _____
(բաժնի անվանումը)

_____ կողմից

____ _____ _____ թ. N _____ անձնական քարտում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառված ՀՀ քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____, ծնված՝ _____ _____ _____ թ.,

_____,
(բնակության վայրը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում _____ _____ _____ թ. վերցված է կենտրոնացված հաշվառման։

Կենտրոնացված հաշվառման համարը՝ _____

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

10_0269

Ձև N 6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Տրվում է այն մասին, որ որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի

կողմից _____դրական եզրակացություն ստացած _____

քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____, ծնված՝ _____ _____ _____ թ-ին,

_____,
(բնակության վայրը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում _____ _____ _____թ-ին

վերցված է կենտրոնացված հաշվառման։

Կենտրոնացված հաշվառման համարը՝ _____

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

10_0269

Ձև N 7

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ (Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ)

Տրվում է այն մասին, որ ՀՀ _____ մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի _____
(բաժնի անվանումը)

_____ կողմից

____ _____ _____ թ. N _ անձնական քարտում որպես որդեգրման

ենթակա երեխա հաշվառված _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____, ծնված՝ _____ _____ _____ թ-ին,

_____,
(ծննդավայրը)

գտնվում է _____,
(բնակության, գտնվելու վայրը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում _____ _____ _____ թ-ին

վերցված է կենտրոնացված հաշվառման:

Կենտրոնացված հաշվառման համարը՝ _____

Ցանկություն է (են) հայտնել որդեգրել _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

_____

Կենտրոնացված հաշվառման համարը՝ _____

Խնդրում ենք ստուգել և տեղեկացնել որդեգրման հնարավորության մասին:

_____
(անունը, ազգանունը)

10_0269

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ թ.

Կ. Տ.

Ձև N 8

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ՀԱՎԱՍՏՈՂ

Երեխաների պաշտպանության և միջպետական որդեգրման հարցերով համագործակցության մասին 1993 թվականի մայիսի 29-ի Հաագայի կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝

1. Կենտրոնական մարմինը

_____

(որդեգրման պետության իրավասու մարմնի անվանումը և գտնվելու վայրը)

_____

_____

2. Հավաստում է, որ երեխան

ազգանունը _____

անունը _____

սեռը _____

ծննդյան ամսաթիվը _____ ամիսը _____ տարեթիվը _____

3. Որդեգրվել է հետևյալ իրավասու մարմնի որոշման համաձայն

_____

(որոշման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը,

_____

որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

_____

_____

4. Հետևյալ անձանց կողմից

1) որդեգրող հոր՝

ազգանունը _____

անունը _____

ծննդյան ամսաթիվը _____ ամիսը _____ տարեթիվը _____

մշտական բնակության վայրը՝ որդեգրման պահին _____

_____

2) որդեգրող մոր՝

ազգանունը _____

անունը _____

ծննդյան ամսաթիվը _____ ամիսը _____ տարեթիվը _____

մշտական բնակության վայրը՝ որդեգրման պահին _____

_____

5. Կենտրոնական մարմինը վկայում է, որ որդեգրումը կատարվել է կոնվենցիային համապատասխան, և, որ 17-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսված համաձայնությունները տրվել են

1) ծագման պետության կենտրոնական իրավասու մարմնի անվանումը և գտնվելու վայրը

_____

_____

_____

2) ընդունող պետության կենտրոնական իրավասու մարմնի անվանումը և գտնվելու վայրը

_____

_____

_____

_____
(անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

____ _____ _____ р.

Ч. S.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 18-ի N 269 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱ-ՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ-ՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԴԵԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ որդեգրողներ) կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառման հետ կապված հարաբերությունները։

2. Որդեգրողների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառումն իրականացնում է որդեգրողների մշտական բնակության վայրում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը (այսուհետ՝ հյուպատոսական հիմնարկ)։

3. Որդեգրողների մշտական բնակության վայրում հյուպատոսական հիմնարկի բացակայության դեպքում որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը։

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը (այսուհետ՝ ՔԿԱԳ-ի մարմին) որդեգրողների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրումը գրանցելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի և որդեգրման մասին ակտի գրանցման պատճենները, ինչպես նաև որդեգրման մասին ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, որը «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված կենտրոնական մարմին է (այսուհետ՝ կենտրոնական մարմին)։

5. Կենտրոնական մարմինը ՔԿԱԳ-ի մարմնից ստացված փաստաթղթերի հիման վրա հաշվառման մատյանում (N 9 ձև) կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է համապատասխան հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելու նպատակով, և սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերի պատճենները տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների իրականացման համար։

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրված երեխայի մասին տեղեկատվությունն ուղարկում է որդեգրողների մշտական բնակության վայրում գտնվող հյուպատոսական հիմնարկ։

7. Հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրված երեխայի հաշվառումն իրականացնում է հաշվառման մատյանում

(N 9 ձև) կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով՝ որդեգրման մասին տեղեկատվությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում։

8. Հյուպատոսական հիմնարկը 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ որդեգրված երեխայի մասին ստացված յուրաքանչյուր տեղեկություն։

9. Հյուպատոսական հիմնարկը, դրա բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն օտարերկրյա պետության իրավասու մարմնին գրավոր հայտնում է տվյալ պետությունում մշտապես բնակվող որդեգրողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրման փաստի և սույն կարգի դրույթների մասին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 150-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ որդեգրված երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 9

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Մ Ա Տ Յ Ա Ն

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԴԵԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

Հաշվառման համարը և ժամանակը	Որդեգրված երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ մինչև որդեգրումը	Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակը և վայրը	Որդեգրված երեխայի անունը, հայրանունը, ազգանունը՝ որդեգրումից հետո	Որդեգրման գրանցման ժամանակը և վայրը	Որդեգրողների անունները, հայրանունները, ազգանունները	Որդեգրողների քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները	Որդեգրված երեխայի առողջական վիճակի և կյանքի կենսապայմանների մասին տեղեկատվության ստացման ժամանակը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8	9